

## Հ Ա Յ Ա Զ Գ Ի

ԵՒ ԻՒՄ ԱՌ ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆ ԸՐԱՇ ՕԳՈՒՏՆԵՐՆ

(Տես Համ. լթ. 3, 97, 199, — Խ. 3, 116, 202):

Այսուհետեւ դարձընենք տեսութիւնը նիս հիւսիսային գծի վրայ:

Այս ուղղութիւնը բռնած հայազգի գծի դաշտականութեանց ժամանակն ևս գեռաքաջածանոթ չէ: Ղազանէն 90 վերստ հեռի Բուլղարաց հին մայրաքաղաքի աւերակաց մէջ գտնուած և հայերէն արձանագրութշ ծածկուած տապանաքարերէն դատելով, կ'երեւի թէ Հայք շատ հին ժամանակներէ ՚ի վեր հաստատուած են այս կազմերը. որովհետեւ այդ արձանագրութիւնքը ջ, թ և գլ., դարերու թուականքը կը կըն յինքեանս:

Յամին 1062 թուաց մեծ իշխանն Աղեքսանդր, լեհաց գէմ պատերազմի ելլելով, Նախոսի<sup>1</sup> Հայերն օգնութեան կը կանչէ հրաւիրական նամակաւ մը, և Հայք կ'ընդունին այն հրաւերը: Բայս վկայութեան կարամզին ուսու պատմագրի, վլատիմիր Մոնոմախիթագաւորութեան ժամանակ հայ դաշտականաց թիւը մեծ էր ՚ի Քիէվ, ուր մասնաւոր քարաշէն եկեղեցի մի ևս ունէին:

Ուսասատանի դաշտական Հայերը, ոչ միայն ՚ի վաճառականութեան և զինուորական գործոց մէջ անսուանի հրաշակուած են, այլ կ'աւանդուի թէ արքունեաց ամենահմուտ բժիշկներն անդամ Հայք էին: Ցանները ուրդ գարուն երբ թափարք Հայաստանի տիրեցին, այնուհետեւ ևս քան զես մեծաթիւ հայ դաշտականութեան դռներ բացուեցան դէպ՚ի թամաթարստան: Վոլկայի ափանց վրայ բարձրացեալ Սարսի, Աժտէրիսան և Ղազան անոնցմով բազմա-

մարդացան: Հայ հանճարն աստ ևս չուտով հոշակեցաւ իւր մեծամեծ ձրիւքն և տիրասիրութեամբ: Կտրամզին կը վկայէ, թէ երկու գար յետոյ Հայոց գնդերը Մամա թաթար խանի զօրաց հետ թուաց Դեմետր մհծ իշխանի գէմ պատերազմիցան:

Հեղինակիս վկայութեանը նայերով, այն ժամանակէն ՚ի վեր բազմաթիւ հայ վաճառականք տարածուեցան մինչ չե ցլուկուա, և թուաց հին մայրաքաղաքին, արքունեաց և ազնուականաց մէջ ևս մեծամեծ դեր խաղացին: Անոնք կը վաճառէին մարգարիտ, անուշահոս ինկեղէնս, համեմունս և պարակական և հնդկային մեծադանձ ապրանքներ: Անոնք դարձեալ թուաստանէն գուրս կը տանէին թանկազին մուշտակներ և մետաղական նիւթեր, և կրնանք ըսել՝ թէ Հայք եղան՝ որոնք առաջին անգամ թուաց վաճառականութեան սկիզբ տուին և արտաքին աշխարհաց հետ կապեցին:

Ուստիսիա այս ժամանակէս ՚ի վեր իւմանալով թէ Հայք են և պիտի լինին տէրութեան գանձուն, վաճառականութեան, արուեստից, և նոյն իսկ Ասիոյ մէջ ընելիք ապագայ աշխարհակալութեանց մեծապէս նպաստամատոցք, ոյս պատճառաւ միշտ յարգեց զՀայս, և միշտ հաստատուն պահեց գէպ՝ ՚ի այն ազգն ունեցած իւր խորին համակրութիւնը կայսրն Ալեքս Միքայելովիչ Մեծն Գետրոս, կատարինէ թ, և անոնց յաջորդ կայսերք գիտցան միշտ մեծապէս պատճառագրութեամբ, հրովարտակաք և արտօնութեամբ հրաւիրելզայս:

<sup>1</sup> Անցայտ է այժմայս անունս և անոր ռեզ:

՚ի Ռուսաստանու Ռւստի քիչ յետոյ Նիժ-  
նի Նովգորոտ և Պետերպուրկ տեսան  
հայազգինոր գաղթականաց Եկաւորու-  
թիւնը և անոնց բազմապիսի արդասկիրը  
վայելեցին. Յամին 1779 Ղրիմի թե-  
րակղզիէն գաղթող 15,000 գաղթա-  
կան Հայք շինեցին զնորն Նախիջնան,  
յանուն հնոյն Նախիջնաւանայ, և Գրիգո-  
րուպօլիս քաղաքներն, և անոնց մէջ  
բնակելով Երկոյն ժամանակ իրենց ա-  
ռանձին օրինօքն և գատաւորներով կը  
կառավարուէին.

Յիշարական յիշատակա-  
րան՝ մը կը հաստատէ, թէ Հայք եղան  
առաջին անգամ Ռուսաստանի մէջ  
ապրչմի գործարաններ հաստատողնե-  
րըն, և իրենք ուսուցին Ռուսաց Աւ-  
տաքասագործութեան արուեստը : Հայք  
մոցուցին անդ նոյնպէս զայգեգործու-  
թիւն, գաղղիական ոճով օդի մզելու  
արուեստ, որիթի մշակութեան, թթե-  
նի տնկելու, բրնձի և ուրիշ պտղա-  
տու ծառոց արուեստն և մշակութիւնը :  
Աժտէրիսանի, Ղզլարի և Մոզգորի Հայե-  
րըն, որոց թիւն 44,000էն աւելի էր,  
կասպից ծովուն մէջ նաւարկող նաւուց  
և շոգենաւուց կազմութեանն և անոնց  
վաճառականութեանը մէջ մեծ ազդե-  
ցութիւն ունեցան : Հայք գարձեալ ե-  
ղան յօդ միութեան կովկասու և Սկ  
ծովուն եղերը բնակող բազմացեղ  
բազմալեզու լեռնաբնակաց հետ :

Սակայն Հայազգի այս գծի վրայ ըն-  
թացող գաղթականաց ընդարձակու-  
թիւնն և ընթացիցը ճիշդ գաղափար  
մառնլու համար, պէտք ենք Հայեացը  
մը տալ Ղրիմի գաղթականաց վրայ, և  
այնպէս յառաջել դէպ ՚ի հիւսիս և  
յարնմուստ . որովհետև այն գաղթա-  
կանքն նշանաւոր են երեք տեսու-  
թեամբ, նախ թուով, Երկորոդ իրենց  
դարձագարձ Երթեւեկութեամբն, Եր-  
րորդ իրենց աշխարհաշինութեամբ :

Այս թերակղզւոյն համար կ'աւանդէ  
պատմութիւնն, թէ յժբ գարու մէջ

1 Նաւաք. յետ. Հայ պատմութեան մասին.  
Հա. Բ. էլ. 230.

2 ՚ի Նախիջնան պահուած մեռապիր Վկա-

դեռ գենուացւոց ուղը հոն չկոխած,  
մանաւանդ թէ անյիշատակ ժամանակէ  
՚ի վեր, ՚ի Հոյոց Մեծաց, փոքուն Ասիոյ  
և Բուլղարիայէն եկած հայ գաղթակա-  
նաց արդէն բնակավայր եղած էր : Կա-  
ֆայի կամ Թէոդոսիայի հայ ազգաբնա-  
կութիւնն 100,000ի կը հասնէր եր-  
բեմն ժամանակի, եթէ սոոյց է Նախի-  
նանայ եկեղեցւոյն մէջ պահուած  
պատմական յիշատակարանն : Սարա-  
յի, Աստրախանի և Ղազանի գաղթա-  
կան Հայերն թաթարաց բռնութենէն  
նեղուած յժի և ժի գարուն վերսո-  
ւին հօս ապակինեցան : Սակայն երբ  
Էնկթիմուրի հարսուածով կործանեցաւ  
թաթարաց զօրութիւնն, զարձեալ յա-  
մին 1430 վերահաստատուեցան Հայք ՚ի  
Սուտաղ, ՚ի Ղազարաթ, ՚ի Կաֆա, ՚ի  
թաման և ՚ի Խարասու-Փաղար :

Եթէ գենուացւոց և վեհնետկեցւոց  
այս կողմի նաւական վաճառականու-  
թեան անակնկալ տարածուելուն և  
բարգաւաճելուն պատմական պատ-  
ճառները որոնելու ըլլանք, կաֆայի և  
ծոն և Վուկա գետափանցը վրայ կա-  
ռուցեալ այլ քաղաքաց մէջ, անշրջու  
այն պատճառաներէն մէկն ալ է նախ-  
նաբար այն կողմերը հաստատուած  
հայ վաճառականաց ազդաբնակու-  
թիւնն և մեծաթիւ գաղթականաց  
երթեւեկութիւնն, որը մերթ թաթա-  
րաց և թուրքաց բանաբարութեամբն,  
և մերթ ալ Ռուսաց և Լեհաց հրափ-  
րանօքը կը գաղթէին ՚ի փոքր Ասիա,  
՚ի Բուլղարիա և ՚ի Լեհաստան և կը  
վերադառնային ՚ի Ղրիմ, իրենց հետ  
տանելով և բերելով զվաճառականու-  
թիւն և գորուեստու յԱսիոյ յԵւրոպա,  
և յԵւրոպից՝ Ալսիա : Մագաղաթեայ  
հին թայսմաւուրքի մը ետև գրուած  
յիշատակարան մը կը հաստատէ, թէ  
միայն թէոդոսիայի մէջ 400,000 տուն  
Հայեր կային գաղթեակը յԱնույ :

Որչափ որ հայազգի գաղթականաց  
բնակութիւնն անկայուն եր և ստէպ լի

արանութեւն մը Կըսէ, թէ երբ Թուրքը  
Ղրիմի աիրեցին, 40,000 Հայք գաղթեցան ՚ի  
Լեհաստան :

աղետիք բիւր արկածից բազգին , աս-  
կայն ըստ վլյութեան վերոյիշեալ յի-  
շատակարանին , կարացին կանգնել  
գեղեր և աւաններ և քաղաքներ : « Են-  
նեցաք դիւզո և գաւառու (կալուածո) ...  
իշխանքն և աղնուականք մեր 'ի լերինս  
և 'ի դաշոս լի արարին վանօրէիք ...  
շինեցաք տունն հարիցր հազար և զե-  
կուեցիս հազար : Արդարեւ եթէ ակն-  
արկ մը ձգենք Դրիմի թերակղզւոյն  
վրայ , ստուգիւ այն շինութիւններէն ո-  
մանց հետակրոյս աւերակներն և  
Հայոց քաջաց յիշատակարանքն մեզի  
կը ներկայանան և բարձրաբարբառ կը  
խօսին :

Հնդետասաններորդ դարուն վերջիրը ,  
Սամանցիք դաւաճանութեամբ Դրի-  
մի թերակղզին նուաճնելէն և մեծա-  
մեծ կոտորածներ ընելէն յետոյ , ստի-  
պեցին այն խաղաղասէր ժողովուրդը՝  
որ թողու իւր դարական բնակու-  
թիւնքն և տրգասաւոր կալուածներն և  
երթայ օտար աշխարհ : Բարէ , ինչպի-  
սի տարբերութիւն բարուց և վարուց .  
ժողովուրդ մը և ձեռք մը որ ուր տեղ  
համնի կը շինէ և կը կանգնէ : Եւրիշ  
մ'ալ ընդհակառակն կը ատիպէ ժո-  
ղուրդ լքանել :

Աստի ուրեմն , ուր յորդաջուր գե-  
տի նման լցուած էր և բազմացած հայ  
ազգաբնակութիւնն , բաժանեցաւ յեր-  
կուս յառաջս . մին կ'ընթանայ գէպ  
'ի Մըլտա-վալաքիա (Ռումանիա) , իսկ  
միւսն գէպ'ի լեհաստան Մըլուավիացիք  
որոնք 'ի սկզբան մեծամասնութիւն կը  
կազմէին , այն աստիճան մեծ ազգեցու-  
թիւն ունեցան , որ մինչև տեղական գեր-  
իշխանութիւնն (Գոսպոդուրութիւնն ) ան-  
գամ ձեռք բերին , ըստ վկայութեան  
ուրութիւն : Եօթնետասաններորդ դարուն  
վերջերը անոնցմէ 10,000 հոգի անցան  
'ի Դրանսիլվանիա և սեփական կա-  
լուածներ ստուցան : Հայոց՝ այն երկի-  
րը մոնելէն քիչ յետոյ կ'ելլեն կը կանգ-  
նին կեռլա , Պաշվալով քաղաքներն ,  
որոնց հայ ազգաբնակութիւնն գեռ կը  
շարունակուի : Իսկ Մըլտավիայի գաղ-  
թականաց մնացած մասն ալ յետոյ

անցան 'ի լեհաստան : լեհաստանի  
գաղթականաց թիւն որ 40,000ի կը  
համնէր , տարածուեցաւ հետզետէ և  
դրաւեց լէմմակէրկ , կամենից , լուցկա  
և վարշավականացները : Այս բազմա-  
թիւ գաղթականաց գիխաւոր ժամա-  
նակներն երկիր կը վերածին . Ա . Բագ-  
րատունեաց թագաւորութեան անկմա-  
նէն վերջը , Բ . Ալփ-Ալբան թագաւորի  
ասպատակութեան ատենը 1064ի . և Գ .  
Դրիմ Օսմանցոց ձեռքն անցնելէն յե-  
տոյ : Լեռն Դանիէլովիշի , Մեծին գաղի-  
միրի , Սիկիւմունտի և Վլատիսլաւի Դ  
լեհաց թագաւորաց արտունութիւնը :  
Հայք աստ ևս սուր ժամանակի մէջ  
իրենց գործունէութեամիշը մեծամեծ  
գերեր խաղացին , եթէ ըլլայ 'ի վաճա-  
ռականութեան և եթէ աշխարհաշինու-  
թեան մասին : Եկեղեցիս կառուցին ,  
բացին բազմաթիւ ուսումնարանս և ար-  
քեպիսկոպոսութիւն իսկ հաստատե-  
ցին , որ կը տեէ ցարդ , Քաղաքա-  
կան , զինուորական , ուսումնական ան-  
ձանց թիւն ևս մեծ եղաւ , մեծագոյն  
ևս մանաւանդ անոնց առ տէրութիւնն  
լեհաց մատուցած ծառայութիւնն , ո-  
րոնց անուանքն և գործերն հրատա-  
րակեց մատենագիր ոք լեհացի այս  
վերջի տարիներու , և շատ ուրախալի և  
հետաքրքրական բան է :

Եօթնետասաններորդ դարուն՝ կրօնա-  
կան խնդրոց պատճառաւու , որուն մի-  
ջամտեց ապա քաղաքային վարչու-  
թիւնն , ելան ոմանք 'ի Հայոց այս կող-  
մերէն , այսինքն 'ի լեհաստանէ , և գնա-  
ցին 'ի Սպասոնիա , 'ի Պաւէիերա 'ի Հոլան-  
տա և 'ի Մեծն Բրիտանիա : Դիտենք  
այսուհետեւ Հայազգի գաղթականու-  
թեան երրորդ գիծը :

Այս գիծս , որուն վրայ կը գարձը-  
նենք ընթերցողաց ուշադրութիւնը , նա-  
խաճառեալ կրկին գծից միջին գիրըը  
բռնելով . յունական իփակլոն տառի  
նման երկուստեկ տարածուած այն նա-  
խաճառեալ գաղթականութեանց մէջ ,  
այս է արևելքէն գէպ 'ի հիւսիս ընդար-

ձակող ընթացքն՝ և յարեւելից 'ի հարաւային աշխարհս ընթացող դիմքը միացընելով 'ի մի՛ ուղղեց գէկպ յարեւուտու և յեւրոպա, ուր արդէն իսկ կեզրոնացեր էին կրօնք, քաղաքականութիւն, զիտութիւնք և արուեսոք : Արդէազ անդ 'ի սպառ բնաջինջ ըլլալու համար, եթէ Եւրոպիոյ զիտութեան և լուսոյն հետ ՚ի միասին՝ գեղեցիկ ազատութիւնն ևս վերադարձնելու իրենց թշուառ ազդին և Հայրենեաց : Այս կէտերուս ըննագատութիւնը դիտնոց կը թողունք, և մենք անոնց ժամանակին և Արևմտեան աշխարհաց մէջ խաղացած հանդիսից վրայ ուղղակիուշ կը գարձնենք :

Քրիտոնէական թուականէն շատ գարերով յառաջ սկսաւ այս զիծս, այսինքն հարաւային-արեւմտեան հայազդի գաղթականութիւնքը յԱննատոյիտ, 'ի Փոխւգիտա, 'ի Թեսսապիտա և 'ի Լարիսա առ ձգիլ: Տոհմային պատմազրութեան հետ՝ նմանապէս Յունաց ժողովրդական աւանդութիւնքն իսկ զյոդ ընդ Հերոդոտոսի և ընդ Մտրաքոնի կը հաստատեն զայս, զորս նախընթաց գլխոց մէջ յառաջ բերինք :

Չորրորդ գարու Սասանեանց և Բիւզանդիոնի կայսերաց չարախորհ գաշամբն, երբ Հայաստան յերկուս բաժնուցաւ, արևմտեան մատին վրայ Եղինք տիրելով, այն ժամանակէն 'ի վեր սկըսան ամենայն կերպ նենդաւոր հնարք 'ի գործ դնել, եղծ անել անոնց ազդային միութիւնն և իրենց հետ միացընել: Աստի՛ ստիպմունք յունարէն և եղուով ուսանելու զգիտութիւնս, անտի՛ արդեքը Հայոց կաթողիկոսական իրաւասութեան, և կ. Պօլսոյ պատրիարքէն կախումն ունենալու հարկը՝ վատ գուշակութիւնն է, անտի՛ արդեքը Հայոց կիսութիւնն է անդինք մէջ կը յուսան գործ կամ մէջ հանդեպ անդաման ասոր մասին: Ուրիշ յունազգիր արձանազիր մ'կս գտնուած է վերոյինեալ կամսարական Արակայ եղբօրն, որուն անունը գեռ անյայտ է . այլ այս սաղոյդ է թէ նա կանգնեց իւր վաղամեռիկ մահուն մահարձաննր՝ Դարձեալբաց 'ի այն չորս կամ հինգ հայազդի զինուուրական պաշտօնականիրէն, որոնք ծանօթ են մեղի է դարու պատմութեն մէջ, նախընթաց և հետևեալ գարուց մէջ ևս ոչ միայն առանձին ոմանք, այլ ամբողջ հայկական գունդ, մը կը նստէր 'ի Հուաւեննա, իր պահապան կայսերական իտալիոյ: Այս հայազարմ' և արքունի զօրաց գունդս, որ անընդհասաւեած էր, հօն մեծագոյն գեր մը խաղաց, որու հետքերը մինչև ցիկս ծվԱղարու կը տեսնուէին, և Հուաւեննայի նաւահանդստին մեծ ագոյն թաղը կամ անոր Գլասսէ ըսուած նաւաքաղաքին

կաւ Դ գարէն սկսեալ մինչեւ ցժՈ. դար անընդհատ կը դաղթին բիւզանդական կայսրութեան նահանգներն և յԱրեւուտու:

Այս գաղթականներուն թուէն էին անշուշտ այն հայազդի ութ անմահանուն փոխարքաներն իտալիոյ, որոնք իրենց իմաստութեամբն և գիւցազնական արութիւններովն Հուաւեննայի մէջ եղան ստուգիւ անոր ճշմարիտ ազտարարներ, զատ 'ի Ներսէս Պատրիկէն, որուն վրայ արդէն առաջին զլուխներուն մէջ խօսեցանք. այժմ կը գանուի Հուաւեննայի Ո. Վիդալ եկեղեցւոյն բակին մէջ աղնուազարմ' և համբաւաւոր կուսակալի մ'անունն ես՝ իւր մէկ յիշատակարանին վրայ, որ երկու մետրաչափ տապանագքար մի է յունարէն վերտառութեամբ հետաքրքրական արձանագրովն: Այս է Խաչակի կամսարական, կան, որ երկար տարիներ ստանձնելով Հուաւեննայի կուսակալութիւնը՝ լաւ կերպով կատարեց. և յամին 638, ըստ այլոց 641 կամ 644ին հանդեպ անդիստայիստոսս: Կայ Գրիգոր անուամբ հայազդի մ'ալ 666 և 678 թուականաց մէջ, ըստ մերոյ Հ. Ղ. Ալիշանի, սակայն մանրամասն տեղեկութիւն չունիք ասոր մասին: Ուրիշ յունազգիր արձանազիր մ'կս գտնուած է վերոյինեալ կամսարական Արակայ եղբօրն, որուն անունը գեռ անյայտ է . այլ այս սաղոյդ է թէ նա կանգնեց իւր վաղամեռիկ մահուն մահարձաննր՝ Դարձեալբաց 'ի այն չորս կամ հինգ հայազդի զինուուրական պաշտօնականիրէն, որոնք ծանօթ են մեղի է դարու պատմութեն մէջ, նախընթաց և հետևեալ գարուց մէջ ևս ոչ միայն առանձին ոմանք, այլ ամբողջ հայկական գունդ, մը կը նստէր 'ի Հուաւեննա, իր պահապան կայսերական իտալիոյ: Այս հայազարմ' և արքունի զօրաց գունդս, որ անընդհասաւեած էր, հօն մեծագոյն գեր մը խաղաց, որու հետքերը մինչև ցիկս ծվԱղարու կը տեսնուէին, և Հուաւեննայի նաւահանդստին մեծ ագոյն թաղը կամ անոր Գլասսէ ըսուած նաւաքաղաքին

մէկ մասը Արմենիա կը կոչուէր, նոյն՝ պէս հօն եղած վանորպայքն (Լատինաց) կ'ըսուէին Արմենիոյ Վանքերը: Պակայն ժմ. գարու մէջ Գլատաէ նաւահանդստին հետ 'ի միասին այն մասն ալ կը դառ. նա յաւեր և 'ի մոռացնս: Գեր աւելի կ'ետաքրքրական է այն պատմազրին ըսածը, թէ կ'աւանդեն որ զջուաւեն նա իսկ Հայերն յինած են անյիշտառակ ժամանակաց 'ի վիր: Այս գաղթականաց շինութիւններէն քանի՞ քանի պատուական մասցորդը ես 'ի լցոս պիտի դային, եթէ մեր ազգայնոց կողմանէ եւս մանրազնին խուզարկութիւններ յառաջ տարուին:

Մեր իսօպին վերագառնալով, կ'ըսենք թէ շուտով յաջորդեցին Հայոց կամաւոր գաղթականութեանցը՝ բռնի տեղափոխութիւնք, և փոխանակ պարսկային հարստահարութեան՝ բիւզանդական արքունեաց մէկ ուրիշ կորըստական քաղաքավարութիւնն: Կայսերը Յունաց տեսներով հայ ազգին շըել ընդունակութիւնքը և աննման տիրասիրութիւնը, որ չնայելով իւր կը բրած անտանելի նեղութեանց, այլ մասնաւանդ թէ հաւատարիմ մալոր օտար հոդի վրայ ամենազդի ծառայութիւն ես կը մատուցանէր, այնուհետեւ առաւելս յորդորուեցան փոխադրել զանոնքիւն զանգական կայսորդի և ընդարձակ երկիրները լեցընելու համար: Այս աշխարհաւեր և ազգակործան դորդոյն իրեր պարառաջ կը ներկայացընէ մեզի պատմութիւնն այն ամենամեծ կայսը, որուն անունն և գործերը ամենայն ազգաց պատմութեանը մէջ ծանօթէ է, այսինքն է Յուստինիանոս Բ: Աս 'ի Մելիտինէ բնակող Հայերը փոխադրեց մասամբ 'ի է. Պօիսու և մասամբ ալ 'ի Թրակիա: Բատ վկայութեան Սեբէստիոն, 'ի վիրը կոյս Զ դարուն Մօրիկ կայսեր հրամանաւ ուրիշ բազմաթիւ հայեր ես անցան 'ի Թրակիա, և միանալով իրենց ազդակցաց հետ՝ զօրաւոր գունդեր կազմեցին

Դանութի վրայ Աւարաց գէմ զնելով: Ութերորդ գարուն կոստանդին կոպրոնիմոն զկարին քաղաքը գրաւելով անոր հարստութեան զանազան կողմերը բընակեցնելու համար, կ'ըսէ կ'եռնդ երեց: Ստեփանոս Ասողիկ կը ծանուցանէ, թէ ուրիշ բազմաթիւ հայ գաղթականութիւն մի ևս վասիլ Բ տարաւ 'ի Թրակիա ժ գարուն մէջ, երկիրը մշակելու և Ռուսաց և Մաճառաց գէմ դընեւ ներկա համար: Խռուաթիոյ, Թէսաղոնիկէի և Մակեդոնիոյ մէջ կեդրոնացած Հայերն իրենց խելքով և գործունէութեամբն այնքան յառաջադիմեցին և զօրացան, մինչև անոնց ազգեցութիւնը տեսնուեցաւ նոյն իսկ այլասեռ աարերաց և անոնց քաղաքային գործոց վրայ: Կ կայսերք թիւզանդիւնի, որոնք կ'ուզէին օր մը յառաջ խեղզել զէայս յոյն տարերաց մէջ, վրիպեցան իրենց նպատակէն. քասն զի ոչ միայն Բագրատունեաց և Ռուբինեանց ժամանակ հայ տարերաց մեծամասնութիւնն և ազգեցութիւնն աւելի էր քան զյունականը, այլ ըստ վկայութեան Ստեփանոսի Ասողիկ, այս ժամանակամիջոցիս Ասմուէլ Դերջանեցի հայ իշխանն՝ Բուլղարաց վրայ կը թագաւորէ և վասլի ալ գէմ կը զնէ քաջութեամբ:

Իսուրինեանց կամ Փոքրուն Հայոց թագաւորութեան անկմանէն յետոյ այս ուղղութիւնը բռնող հայ գաղթականաց ընթացքն մեծագոյն քայլ մի ես յառաջն ի խորս Միջերկրականի, և գրաւեց զկիպրոս, զշողոս և զկրեաէ կղզիները: Այսպէս որ կրետէի բազմամեայ պատերազմաց բազմավըրդով տարիներուն մէջ անզամ հասարակագետութեան իմաստուն խորհրդականները կը խոստովանէին թէ իրենց այն ժամանակի վաճառականութեան միակ զարգացուցիչք Հայերն էին և անոնց ձեռքով եղած ամենայն ելեմուտքը:

Սակայն այն 30,000 հազար հայ ըն-

տանիքներն, որոնց մասին կը վկայէ Սատուէլի ընդարձակողը, թէ «Եկին թագաւորազոնք և իշխանք Հայոց և բազուկը՝ ի ժողովրդոց», գեռ ուրիշ երկային ասպարէզներ ևս պիտի կտրէին և համնէին մինչև ցիտալիս և ցԳաղղիա:

Եւ իրօք ժ՞ե, ժ՞ե և ժՔ դարուց մէջ տարածուած կը զանենք զէայս ի վենետիկի, 'ի Գենուա, 'ի Հռոմ, 'ի Մարսիլիա<sup>1</sup>, յլմանքերտամ, 'ի Գաատիէ, 'ի Մոնքէլիէ, 'ի Շամբանեա 'ի Մեսսենէ, 'ի Ֆլիանտրա և 'ի Պրուժ և յայլ տեղիս, Գաղղիոց և Անդղիոց պատմութեան մէջ մասնաւոր տեղ բռնած է Լեռն Ե, նա որ իւր բանագնացութեամբն և ներկայութեամբն միայն յաջողեցաւ վերջ տալ այն բազմամեայ և արիւնահեղ պատշերազմաց, որ կը ճարակէին կարուսի Զ և Ռիքարտոսի ժամանակ այն երկու աղջաց մէջ։ Հայ վաճառականներն այս ժամանակամիջոցին կը յաճախէին աւելի երթեւեկութեամբ քան թէ հաստատուն բնակութեամբ նաև կրանատայի, Սիլվլիոց և քիչ յետոյ Պարչելոնայի մէջ։ Հայոց և Հրոշականուն կարողոսի և մէջ եղած փոխադարձաբար նուիրակութիւններն ևս մէկ մէկ պատմական մեծ կէտեր են, բայց աւանդ որ տակաւին անյայտ կը մնան ցարդ։

Ի Փոքր Հայաստանէ յԵւրոպա տարածուելով 30,000 գաղթականն և յարմար զիթք գտնելով մեծամեծ յառաջադիմութիւններ ըրին, հարատացան և հարստացուցին իրենց երկրորդ հայրենիքը, ուր որ բնակութիւն հաստատեցին։ Ի նոսանշանաւորագրինքն եղան վենետիկան Հայք, որոնց թիւն և աղջեցութիւնն օր քան զօր կաճէր և կը զարդանար, քանի որ վենետիկոց հասարակապետութիւնն ոտքի վրայ կան-

գուն կը կենար, և անոր վաճառական նաւքն Սկ ծովը և Միջերկրականը ըրունելով ստէպ յլլրենելու կ'երթենեկէին, Յետոյ ժջ դարուն Զուղայէն եկող ճոխ վաճառականքն ևս նոր ուժ և մշում մը տուին անոնց։ Սակայն վենետիկոց Հայոց բաղդին անիւն ևս դարձաւ։

Իտալաբնակի հայ գաղթականաց բարեկեցութեան և աշխարհաշինութեան իրրե ստոյդ ապացոյց կեցեր են տակաւին այն բազմաթիւ եկեղեցին, զորս կանգնեցին 'ի Հռովմ, 'ի Գլասու<sup>2</sup> Ս. Յովհաննէս Հայոց, 'ի Բերունիհա՝ Ս. Մատթէոս, 'ի Փլորիենտիա՝ Կարդունեանց մենաստանը, 'ի Վենետիկ։ Խաչն նաև 'ի Գենուա, 'ի Պատարիսոն, 'ի Լիվոնոյ և 'ի Բիզա, յլնգոննա, Բիմինի, յօրվիեցոյ, 'ի Սալեռոնոյ, 'ի Ֆերարա, 'ի Ֆլիանա, 'ի Կուպալիոց, Բարմա, 'ի Ֆաէնցա 'ի Ֆապրիանոյ, 'ի Նէապոլիս, 'ի Բիատոյա, 'ի Միլան, 'ի Բաւիա, 'ի Բոնդէ և 'ի Գուրրոնէ։

Սոստ կը լմնայ Հայազգի գաղթականութեանց ընթացից պատմական ասպարէլն։ Բայց թէ յետ այնորիկ դեռ ինչ աշխարհներ ընթացաւ Հայ աղդն դէպ յլլրեմուտս և ինչպիսի գերխաղց, այս կէտո ներկայ ժամանակի պատմութեան կը թօվունք Սակայն մարդկային աղջի այդ ծաւալական տարրն որ արիական զօրաւոր և ընդարձակ բնոյ անտի առաւ իւր ծագումը՝ անշիշատակ ժամանականերէ 'ի վեր, որ Պարսկային և կասպից ծովէն անցնելով տարածուեցաւ մինչև 'ի խորս Հնդկային Ավկիանոսի, և Հընդկային Ավկիանոսէն<sup>3</sup> և Միջերկրական ծովէն տարբեր ընթացք բռնելով հաստաւ մինչև յԱսուցեցեալ և Աղլանտեան Ավկիանոսներն, որ վաճառականու-

<sup>1</sup> Այս բարքի մէկ թաղն որ գետ անոնց առունը կը կը այսօր, այն տեղ ընակութիւն հաստատած մնելու միտք առաւաւեայն է։

<sup>2</sup> Պատմութիւնն կ'աւանդէ, թէ յամի 1659 Պարսկաստանի հայ վաճառականաց ընկերութիւնն Աւելս Միջայէլովն նաբին արաման-

գուն և յակինթով պանեւալ ոսկեղէն գահցյը մը ընդացեց, որուն գինն էր 24,443 ուռաղիք, և վաճառականական գամինք մը հաստատեցին, որուն զօրութեամբն հայ վաճառականը Պարսկային ծոցէն և կասպից ծովէն տարածուեցան մինչև 'ի Ս. Պետրոպուրէ։

թեամբ, արուեստիք<sup>4</sup>, շինութեամբ, քաղաքական և զինուորական հանճարօք այնչափ ազգաց ծառայութիւններ մատոյց, միթէ սպառեցաւ հանդոյն հին աւուրց ազգաց ընդ որո ապրեցաւ, միթէ վերնախնամ տեսչութենէն իրեն յանձնուած պաշտօնը կատարեց այս երկիր վրայ, և ուրիշ ապագայ շունենայ պիտի: Ո՛չ, ոչ բնաւ: Այս կէտո յետոյ պիտի բարգաւաճնք. այժմ անոնց ուսումնական ընդունակութեան և ճաշակին իրեւ ստոյդ հաւաստիք իրենց բազմաթիւ տպարանները միայն մէջ բերինք, զորս հաստատեցին այն ժամանակամիջոցին յեւոպաւ և յԱսիա:

1 Հաս վկայութեան հմ.ւա մատենագրի մը, Նորկաստանէն գաղթող Հայք ուրիշ գումար մ'ոլ շուէտի հետ հաստատեւ հն յամին 1686: Յամին 1710 Սահար Բասիլիկվ հայացքին, առա-

վենետիկեան չայերն առաջին եղան, որը յամին 1565 հաստատեցին իրենց յատուկ տպարան մը: Անոնց օրինակին հետևեցոն ապա մնացած չայր: Յամին 1567 'ի կ. Պօիս, յամին 1584 ի Հոռվիմ, յամին 1616 'ի Լէմպէրկ, յամին 1624 'ի Մեդիոլան, յամին 1633 'ի Բարիկ, յամին 1640 'ի Ջուղա, յամին 1660 յԱմագերատամ, յամին 1673 'ի Մարսիլիա, յամին 1680 'ի Լայրցիկ. յամին 1690 'ի Պատուիոն, յամին 1719 'ի Կալիսգա և 'ի Մատրաս. յամին 1770 յԼէմիածին, յամին 1880 'ի Ս. Պետրապուրկ. յամին 1790 'ի Նոր Նախինան և յամին 1799 յԱստրախան:

ջին անգամ թթենի անկեց Թիրեկի շրջոկայ երկիրներուն մեջ և հաստատեց մետսքսի առաջին գործարանը:

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ ԶՀԱՅԿԱԿԱԾՆ ԻՐԱԾ

### Ա. Զ. Դ.

Այսպիսի վերնագրաւ (Appunti di Cose Armene) բազմահմուտ և բազմավեցու վարժապետն Բիզայի Համաստանին՝ Եմոյիոյ Գեղա, հրատարակած է հետևեալ յօդուածը և ծանօթութիւնը, Մշակուրիւն (La Cultura) անուանեալ և նոր սկսեալ բանասիրական օրագրին մէջ (Ա. տարի, թիւ. Ժ, 1882, մարտ ամիս). և քննութեամբ կը խօսի մեր Բագմակից օրագրին մէջ հրատարակած երկու սխրոց վրայ, որ են, Տէ Ամիսիսի կուսանշնուազայց թարգմանութիւնն, և մեր նախնեաց աւանդեալ խարոյ Աղուևան Արակն կամ վկան: Խոսացաւց արգի նարտար զրյաց մէկն է Պր. Դեղա. բանիրուն խուզարկու թէ իմաստափական և թէ գեղեցիկ անուանեալ դպրութեանց, թէ արևմտեան լեզուաց մեծ հմտութիւն ունի, սուր յիշուզութիւն մը սովորելու և բաղդատելու զայլաւայլ լեզու և քննադատելու զգրուածս. առանց վարպետի ինքն իրեն սովորած է մեր հայերէն լեզուն ալ, թէ զգրարառն և թէ զաշխարհաբառ, և հրմայ աւելի այս ետքինին հետամուտ կ'երևի. նորատիպ հայերէն գրքեր կը սունայ և կը քննէ, որոց մէջ մեր Բագմակից Համեղիստանն ալ, և երբեմն կարեոր զիսուզութիւններ կ'ընէ և կ'իմացընչ մեզի: Թէ օրագրաց մէջ և թէ առանձիւն շատ բան հրատարակած է վերցիշեալ բանասիրական վիսելեաց տեսակէն, ընդհանրապէս սեղմ և համառօտ կորուկ ոճով, որ երբեմն լաւ մոտադրութիւն կը պահանջէ հասկընալու: Կը փափագուի և յուսացուի որ իր ընդգարձակ հմտութեանց համեմատ՝ ընդգարձակ գործ մ'ալ հրատարակէ յօգուտ և 'ի պարծանս նախի իր խոսական ազգին, և ապա օտար գիտնականաց. ուսակց թերեւս մասն ենէն նաև Հայոց, որոց կնէ և նոր լեզուն և գարութիւնն իրեն ախորժական պարապմանց մէկն եղած են, և որոյ համար կը ընանձե մենք ալ զինքն երախտաւ ուր հոչակել: